

Գրիգոր այն ատեն երբ քեռուոյն երեսը նայեցաւ, նորա աչքերն այնպիսի կատաղութեամբ կը փայլէին, որ գլուխը անդին դարձուց. իսկ Սուրեն «երթանք» ըսաւ եւ դէպի ախոռը շտկուեցաւ. պատրաստ եւ թամբեալ արաբացի նժոյգ մը հանեց, Շէյխին ամենէն սիրելի նժոյգն էր. «Տէ՛ Գրիգոր, հեծիր»,– ըսաւ. նոյնպէս Գագրիկին, նոյնպէս իրեն. երեք ամենէն ընտիր ձիանքն էին: Ձի մ'էլ ետեւէն, որ միայն իրենց ձիոց համար դարի եւ իրենց համար քիչ մը պաքսիմատ բեռնաւորեալ էր՝ կ'ուզար:

Իսկ հրդեհը կը բորբոքէր, կը մեծնար եւ ամէն կողմէ կը ճարճատէր: Եւ ահա մարդկանց աղաղակներ կը բարձրանային, իսկ Սուրեն՝

– Լաւ՛ է, լաւ, դեռ մերայնոց ողբոց եւ հեծութեանց շատ ոչինչ պատասխան են սոքա,– ըսաւ եւ հեծաւ. ծանր ընթացք մը տալով ձիերուն Գրիգորի եւ Գագրիկի հետ սկսաւ խօսիլ:– Նայեցէք ի՛նչ կ'ըսեմ. ուշադիր եղէք, վասնզի մեր ամենէն դժար բանը այս պատրաստութեամբ այս ձիերուն վրայ գտնուելն էր. եւ ես երկու տարի է, որ մտածեր եւ կարգագրեր էի աս փախուստը: Նայեցէք երկինք, սա աստղը (հիւսիսային աստոր ցցուց) ձեզի առաջնորդ պիտի բռնէք միշտ եւ դէպի նորա աջ կողմը պիտի շեղիք քիչ մը՝ մինչեւ որ Եփրատը գտնէք. այդ գետը հասնելէն վերջ՝ նա ձեզի կ'առաջնորդէ:

– Ի՛նչ կը նշանակեն այս խօսքերը,– ըսաւ Գրիգոր,– միթէ՞ մենք իրարմէ պիտի բաժանուինք:

– Ինչչափ կարելի է կը ջանանք չի բաժնուելու, բայց եթէ հան- կարծ դիպուածները զմեզ բռնադատեն եւ ես ձեզի ըսեմ «Ազատեցէք ձեր անձերը», իմ խօսքիս պէտք է հնադանդիք եւ ձեր փրկութեան նայիթ: Ուստի հիմա պէտք է նաեւ ձեռի ստակ տամ, որ այսպիսի դիպուածի մէջ առաջին զէնք կը համարուի: Եւ բացաւ բանալիքով մը մախաղին մէկ աչքը, եւ երկուքին էլ մէկ բուռ սսկի տուաւ, որ իրենց գրպանին մէջ դրին: Եւ երբ այս գործողութիւնն էլ լրացաւ, վերջին անգամ ար գլուխը դարձուց հրդեհին նայեցաւ, եւ սկսաւ ի՛նք առջեւէն, միւսներն ետեւէն՝ քշել դէպի Բալմիրայի անապատի կողմը: